

դունած դոյզն թոշակով կ'ապրէր: Եւ վասն զի
Էջմիածնի եւ ազգին վրայ շատ խիստ տրտունջ-
ներ կ'ընէր. շ. Աւգերեան առանձինն կ'ազդա-
րարէ անոր՝ կրածներուն փոխարէն՝ Աստուծոյ
առջեւ վաստըկած արդիւնաւորութիւնը չկոր-
սընցընելու համար, եւ որպէս զի ուրիշները
չկարծեն թէ իր կաթողիկէութիւնը կատարեալ
ցոյց տալու համար կ'ընէ, այնչափ չգանգատի
հայ ազգին վրայ, եւ խօսքին մէջ չափաւոր ըլ-
լայ: Բարի Արքեպիսկոպոսն սոյն ազդարարու-
թեան համար շնորհակալ եղած է իրեն: Ահա-
ւասիկ իր խօսքերը.

“1789ի 23 Օգոստ. եկն զառաջինն ի
վանս մեր Գերապայծառ Կարապետ եպոսն. Թիֆ-
լիզու հնձացի, որ եւ Կարնեցի կոչէր զինքն,
պատճառանօք յուխտ գալոյ սրբոյն Անտոնի ի
պատուա. այլ կամք նորա էր բնակել ի Ա. Ե-
նետիկ՝ յետ կալոյ ի հռովմ եւ յանքօնա ժա-
մանակս ինչ: Յաւուրս տօնից ըստ բաղձանաց
նորա կոչէաք զնա ի վանս. տարաք եւ ընդ մեզ
ի գիւղ: Սա էր այր քաղցր եւ առաքինի, քաղ-
ցրաձայն, փառացի, եւ մեծամօրուս ընդ լայն
եւ ընդ երկայն մինչեւ ցգօտին, վայ յամենայն
նուագս տանելոյ ի ծոց զձեռն իւր՝ հարկաւորէր
միով ձեռամբ ամփոփել զմօրուսն: Սա վասն
ուղղափառութեան եւեթ խոյս տուեալ յա-
րեւելից՝ թօթափմամբ յամենայնէ, սակաւաւոր
թոշակօք հռովմայ ապրէր. եւ զի ի պատմեքն
զանկարգութիւնս Էջմիածնի եւ ազգին ողջոյն
յայրեալ սրտէ խօսէր ծանունս, առ յոյժ ըն-